



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ**

«05» դեկտեմբերի 2018 թվականի N: 549 ք.Գյումրի

ԳՐԻԳՈՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ, 163-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Գրիգոր Պապոյանի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ Գրիգոր Պապոյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդի մնացած մասը՝ 10 աշխատանքային օր, և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ից 28-ը ներառյալ:
2. Գրիգոր Պապոյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Հասմիկ Հարությունյանին:

Տ.ՂԱՐԻԲՅԱՆ
Փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

